ԱՇՈՏՅԱՆ ԵՐԿՈՒ ԽԱՉԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշոտ Մանուչարյան

Հայ ժողովրդի փառահեղ անցյալի ազգային-հոգևոր վիթխարի ժառանգությունում իրենց յուրօրինակությամբ առանձնանում են այն երկու հնամենի խաչերը, որոնք ցուցադրվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանում: Դրանք երկուսն էլ Բագրատունի արքաների խաչեր են, որոնց առջև խոնարհությամբ կանգնած՝ խորին ակնածանքի ու ազգային հպարտության աննկարագրելի պահեր ես ապրում: Այդ երկու խաչերը X դ. մեր ժողովրդի անցած դժվարին ճանապարհի, կորովաբար հաղթահարած բազում դժվարությունների, տառապանքների, փթթուն, նորանկախ աշխարհաշեն երկիր ներխուժած ու բազմաթիվ ողբերգություններ պատճառած նենգ, ժպիրի թշնամու դեմ տարած փայլուն հաղթանակների, հարատև խաղաղության հաստատման, երկրաշեն ծաղկունքի ապահովման, իմաստությամբ ու բարեգթությամբ առաջնորդվելու վկայություններն են:

Թանգարանում պահվող խաչերից մեկը Աշոտ Երկաթինն է, մյուսը՝ Աշոտ Ողորմածինը: Խաչերը պատմության ալեկոծ հորձանուտներից անձնվիրաբար փրկված ու անմնացորդ հոգատարությամբ մեր օրեր փոխանցված անգին մասունքներ են, սրբություններ, որոնց վավերականությունները խարսխված են իրական փաստերի, պատմական սկզբնաղբյուրների անվիճարկելիորեն հավաստի հիշատակությունների վրա:

Աշոտ Բ. Երկաթ Բագրատունի թագավորը (914-928), ինչպես ականատեսի գրչով վկայում է նրա գահակալության փոթորկալից օրերի բուռն իրադարձությունների կիզակետում գործող գլխավոր անձերից մեկը՝ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929), սովորություն ուներ սուրբ խաչը, հատկապես ռազմական գործողությունների ժամանակ, «միշտ առաջի իւր շրջեցուցանել»[1]: Իսկ դա նշանակում է խրոխտ արքայի՝ Աստծուն ապավինելն ու խաչի զորությամբ քրիստոնեհալած այլակրոնների նկատմամբ հաղթանակների հասնելու համար

---

[1] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 313 (այսուհետև՝ ***Հովհաննես Դրասխանակերտցի*** և էջը):

խոր հավատ ունենալը:

Քրիստոնեական կրոնի խորհրդանիշ խաչի աստվածային տիեզերական զորությունների մասին վաղագույն անդրադարձներից հայ իրականության մեջ V դ. մեծանուն փիլիսոփա Դավիթ Անհաղթի ներբողն է: Իր այդ «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» գովասանական ճառում անպարտելի իմաստասերը, փառաբանելով խաչը, երևան հանելով նրա բազում զորությունները,առանձնանշում է. «... Թագաւորաց հաղթանակ. իշխանաց յոյս քաջութեան. քրիստոսասէր զօրաց յառաջապահեստ. ախոյանաց քաջալերութիւն. նահատակաց զօրավիգն. վտանգելոց օգնական. պարտեցելոց ապաւէն...»[1]:

VII դ. նշանավոր գիտնական, աստվածաբան Թեոդորոս Քռթենավորն իր «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ եւ ի տնօրէնութիւն տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի» գովաբանությունում խաչը փառաբանում է նաև որպես «նշան յաղթութեան պարտեցելոյ թշնամւոյն»[2]: Մեծ ուսուցչապետ Թեոդորոս Քռթենավորն այդ ներբողը ձոնել է մի այնպիսի ժամանակ, երբ «խաչի պաշտամունքը,- ինչպես դիպուկ նկատել է Մանուկ Աբեղյանը,- 7-րդ դարում շատ զորացած էր Հիսուսի *Խաչափայտի* գերվելու և ազատվելու կապակցությամբ»[3] և «Ս. Խաչը հաճախ երգվում է իբրև *Նշան հաղթութեան* թշնամիների դեմ»[4]: Բանասեր գիտնականն ակնարկում է այն հայտնի եղելությունը, երբ Պարսկաստանի Խոսրով Բ. Փարվեզ արքան (590-628) 614 թ. գրավեց Երուսաղեմը, գերեվարեց ու Տիզբոն տարավ Խաչափայտը՝ մեծ վիշտ ու տրտմություն պատճառելով համայն աշխարհի քրիստոնյաներին: Բայց 628 թ. Բյուզանդիայի Հերակլ կայսրը (610-641) կարողացավ հաղթել պարսիկներին, ընդ որում նաև հայկական զորագնդի օգնությամբ՝ հրամանատարությամբ հայոց իշխան Մժեժ Գնունու, ազատագրել Խաչափայտը ու Հայաստանի վրայով մեծ ցնծությամբ տանել «և նույն թվի

---

[1] «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ», Վենետիկ, 1932, էջ 23-24:

[2] «Նորին երանելւոյն Թէոդորոսի ճգնաւոր միայնակեցի եւ վարդապետի ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ եւ ի տնօրէնութիւն տեառն մերոյ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի», Մատենագիրք հայոց, հ. Ե., Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1255:

[3] ***Մ. Աբեղյան***, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 553:

[4] Նույն տեղում:

սեպտեմբերի 14-ին փառավոր հանդեսով զետեղել իր ավանդական տեղում՝ Երուսաղեմի Ս. Հարություն տաճարում»[1]:

Ս. Նշանի զորավոր ուժին են ապավինել «Սասնա ծռեր» դյուցազներգության գլխավոր հերոսները, երբ մարտից առաջ իրենց ջլապինդ աջ բազկին են կրել Խաչ պատերազմին:

Թեոդորոս Քռթենավորի աշակերտ Մեծն Հովհան Օձնեցին բացատրում է խաչի զորությունների պատճառը՝ «զի ի նոսա բնակէ Հոգին Սուրբ»[2]:

Ուշադրության արժանի է փաստը, որ Աշոտ Բ.-ի խաչը երկաթյա է: Մետաղի նյութի տեսակի ընտրությունը պատահական չէ: Աշոտը, լինելով թագավոր, կարող էր ունենալ խաչ՝ պատրաստված ամենաթանկարժեք մետաղներից՝ ոսկուց, արծաթից, առանց մտահոգվելու, որ այն մարտերում կարող էր կորստի մատնվել, ավարառվել: Վերջինիս տեսանկյունից բոլոր խաչերն էլ, զուտ բարոյական առումով, հավասար են՝ լինեն թանկարժեք մետաղից, թե հասարակ, քանի որ ավարառվող իրն ավելի մեծ արժեք ունի. այն հակառակորդի խաչադրոշն է, պատերազմական պատիվը, նրա դեմ տարած հաղթանակի վկայությունը: Իսկ Աշոտ Երկաթը պարտությունների մասին չէր էլ մտածում, այլ «աներկիւղաբար սրտի»[3], «կառավար կալեալ զմիտս իւր՝ առ Աստուած հայէր»[4] և «իբրև զարծուի սաւառնաթև սլացեալ ընդ օդս, այնպէս սրավարեալ խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն, որք ասպատակ սփռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. և նախ քան զամենայն ինչ ի փոքր մի վայրկեան ժամանակի յինքն առհասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ ամրոցս տէրութեան հօր իւրոյ, զոր առեալ կալեալ էր ոստիկանին»[5]: Աշոտն առհասարակ «բազում մրցումնս և արիական քաջութիւնս ընդդէմ բոլոր թշնամեացն մարտիւ կարգէր՝ ոչ միայն ընդ Սառակինոսացն, այլև ընդ Վրաց, և ընդ Գուգարաց, որք ապիրատս զնմանէ խորհէին»[6]:

Հովհաննես Դրասխանակերտցուն կարծես լրացնում է X դ. մեկ ու-

---

[1] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 431:

[2] «Կանոնագիրք հայոց», Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 533:

[3] ***Հովհաննես Դրասխանակերտցի*** , էջ 243:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 271:

րիշ պատմիչ Ստեփանոս Տարոնեցին, որ ասում է՝ Աշոտ «հալածական առնէ զԻսմայէլացւոցն զօրն յաշխարհէս Հայոց. որոյ ի մարտս զօրաց ոչ պիտաւորէր, այլ անձամբ մղէր զպատերազմն»[1]: Իսկ մինչ այդ նույն պատմագիրն ընդգծում է. «Այս Աշոտ, որ ըստ քաջապինդ արութեան իւրոյ Երկաթ անուանեցաւ՝ բազում գործս արութեան ցուցեալ ի Կոստանդնուպոլիս և յաշխարհն Յունաց»[2]: Այդպիսով հանրաճանաչ դառնալով **Երկաթ** մականվամբ՝ Աշոտը նախընտրել է ունենալ իր պատվանունը խորհրդանշող **երկաթե խաչ**[3]:

Մայր տաճարի թանգարանի երկրորդ խաչը, հոդվածի սկզբում ակնարկվածի համաձայն, Աշոտ Գ. Բագրատունի թագավորինն է, ով հայտնի է Ողորմած մականվամբ: Արքայի՝ այդ պատվանվանն արժանանալու պատճառներն պարզաբանում է Ստեփանոս Տարոնեցին. «Այս Աշոտ խաղաղասէր բարուք կալեալ զաշխարհս Հայոց՝ խոնարհութեամբ և ողորմածութեամբ զանցոյց զամենեքումբք. վասն զի զգոնջացեալսն և զկաղսն և զկոյրսն հաւաքէր առ ինքն, բարձակից ինքեան առնելով ի խրախճանութիւնսն. զոմանս ի նոցանէ իշխանս և իշխանաց իշխանս և կիւրապաղատս անուանէր և զբօսնոյր նոքօք. և զքոսն կարմիր և զվէրս նոցի առաջի աչաց իւրոց փոխանակ զարդուց և ականց փայլելոց համարէր: Այլ և զբաժակն իւր թագաւորական ըմպելեօք մատուցանէր նոցա, և յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ գինւոյն՝ յայնժամ զմնացորդս նոցա առեալ ինքն ճաշակէր: Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց՝ մինչև ի մահուան իւրոյ ոչ լինել դրամ մի ի գանձատան նորա. այլ և զկապուտ զարդուցն և զբազմականացն և որմոց տայր կարօտելոց: Եւ քաւեաց զմեղս իւր ողորմութեամբ և գթով տնանկաց»[4]: Վարդան Արևելցին էլ հավելում է, որ Աշոտ Ողորմածը «բազում ուրկանոցս շինեաց, և առատ ռոճկօք դարմանէր զնոսա»[5]: Բացի այդ, բարեգութ արքան հովանավորել է իր բարեպաշտ կնոջը՝ Խոսրովանուշ թագուհուն

---

[1] «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 170 (այսուհետև՝ ***Ստեփանոս Տարոնեցի*** և էջը):

[2] Նույն տեղում, էջ 169:

[3] Աշոտ Երկաթի խաչի *«կրկնօրինակը ՀՀ բանակի 20-ամյակի կապակցությամբ 2012 թ. հանձնվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը»,* տե՛ս ***Ա. Եղիազարյան***, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, 2016, էջ 2:

[4] ***Ստեփանոս Տարոնեցի***, էջ 180-181:

[5] «Հաւաքումն պատմութեան Վարդանա վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 89:

(մի. 988 թ.), կառուցելու Սանահնի վանքի Ս. Ամենափրկիչ կաթողիկեն (966-972) և հիմնարկելու Հաղբատի վանքը՝ Ս. Նշան եկեղեցու կառուցմամբ 976 թ., որի շինարարությունն ավարտվել է 991 թվականին:

Այդ խաղարար, բարեգութ, բարեպաշտ, գթասիրտ արքան, վաստակելով Ողորմած պատվանունը և նմանակելով հորեղբորը՝ Աշոտ Երկաթին, գերադասում է գործածել խաչ՝ պատրաստված մի նյութից, որը կխորհրդանշեր իր մականունը: Դրան արքայավայել էր ու լիովին հարմար բյուրեղյա խաչը: Բյուրեղն ունի անբիծ մաքրության ընկալման իմաստ, թափանցիկության նշանակություն: Պատմագիր Առաքել Դավրիժեցին բացատրում է. «Բիւրեղն՝ որ է պիլօրն», ինչի օգտակար գործակիցներից մեկն էլ՝ դրա փոշու օժտվածությունն է մաքրելու, սպիտակեցնելու հատկությամբ[1]: Լ. Խանլարյանի ծանոթագրությամբ «պիլօր»-ը նույն «Буллур-горный хрусталь»-ն է[2]՝հղում կատարելով XI դ. խորեզմցի պարսիկ խոշորագույն գիտնական Աբու Ռայհան ալ- Բիրունու հանքագիտական երկին[3]: Այսինքն՝ բյուրեղը լեռնային բյուրեղապակին է, որ կոչվում է նաև *վանակն*: Վերջինս ապակու նման թափանցիկ մեծ բյուրեղ է, որից «շինում են զանազան զարդարանքներ»[4]:

Ալ-Բիրունու (973-1048) բացատրությամբ բյուրեղն «սպիտակ քար է, որը գտնում են արաբների երկրում լուսնի աճի ժամանակ... ամսվա երկրորդ կեսին:

Լեռնային բյուրեղապակին թանկարժեք քարերից ամենաարժեքավորն է, որից մշակվում են անոթներ ու լիուլի գործածվում առօրյայում: Այն ունի մեծ ամրություն, որի շնորհիվ կարելի է կտրել շատ թանկարժեք քարեր»[5]: Պարսիկ գիտնականը ավելորդ չի համարում նշել, որ արաբները բյուրեղը կոչում են նաև ***մահա*** և այն ստուգաբանում է որպես բարդ բառ՝ կազմված արաբերեն ***մա*** (ماء - ջուր) և ***հաուա*** (هواء - օդ) ար-

---

[1] Տե՛ս ***Առաքել Դաւրիժեցի***, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 444:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 525:

[3] Տե՛ս ***Абу-р-Райхан Мухаммед ибн Ахмед ал-Бируни***, Собрание сведений для познания драгоценностей (минералогия), М., 1963, էջ 169-177 (այսուհետև՝ ***Ալ-Բիրունի*** և էջը):

[4] «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. IV, Երեւան, 1945, էջ 298:

[5] ***Ալ-Բիրունի***, էջ 170: Ռուսերենից այս և հետագա թարգմանությունները մերն են:

մատներից, ապա պարզաբանում. «Նրա արժեքը թափանցիկության ու կյանքի երկու հիմքերի՝ ջրի և օդի հետ նմանության մեջ է»[1]: Ալ-Բիրունու ասելով՝ «լավագույն բյուրեղապակին գտնվում է զինջիների կղզիներում, Բասրայի Դիբաջաթի կղզիներում»[2]:

Ալ-Բիրունին նաև վկայակոչում է IX դ. արաբ նշանավոր փիլիսոփա Աբու Յուսուֆ Յակուբ բեն Իսհակ ալ-Քինդիին, որի կարծիքով «բյուրեղապակու լավագույն տեսակը բեդվինականն է, որը հավաքվում է անապատներում ... Այդպիսի բյուրեղ կա նաև Ցեյլոնում, բայց զիջում է բեդվինականին իր մաքրությամբ»[3]:

Մեզ համար հատկապես ուշագրավ են ալ-Բիրունու այն հիշատակությունները, որ «բյուրեղապակու հանքեր են գտնվում Հայաստանում ... Այդտեղի բյուրեղապակին դեղնավուն նրբերանգի է»[4]:

Մայր տաճարի թանգարանում ցուցադրվող Աշոտ Ողորմածի բյուրեղյա խաչն ունի թույլ դեղնավուն նրբերանգ: Հետևապես, հայոց Աշոտ Գ. Շահանշահ, Տիեզերակալ արքան սեփական խաչի պատրաստման համար բյուրեղի տեսակի ընտրության հարցում նախապատվությունը տվել է հայրենի ամուր, սեգ լեռների պնդապինդ վանակնին: Խաչի արծաթյա պատվանդանի 966 թ. մակագրության՝ Մաղարդայի Ս. Ստեփանոս Նախավկայի վանք արքայի՝ «բազում զօրօք»[5] գալու արտահայտությունից ակնբախ է, որ բյուրեղյա Ս. Նշանն ըստ էության եղել է Աշոտ Ողորմածի

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 171: Ալ-Բիրունու գրքի ռուսերեն հրատարակությունում ծանոթագրվում է, որ զինջիների կղզիներն արաբական աշխարհագրական գրականության մեջ հասկացվում են Կոմորյան կղզեխումբը, Զանզիբար ու Մադագասկար կղզիները, որոնք նվաճած արաբներն արդեն IX-X դդ. այդտեղից բյուրեղ են տարել Արևելյան Աֆրիկա, Արաբիա, Իրաք, Հնդկաստան, ինչպես նաև բյուրեղապակուց պատրաստված իրեր են արտահանել Եվրոպա, անգամ՝ Չինաստան (տե՛ս նույն տեղում, էջ 460): Հավելենք, որ «զինջի» բառն արաբերեն է՝ زنجى և նշանակում է «սևամորթ»:

[3] Նույն տեղում, էջ 172: Ցեյլոնը Շրի-Լանկա կղզու նախկին անվանումն է:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս ***Ա. Մանուչարյան***, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Երևան, 2015, էջ 46-47: Խաչի արծաթյա պատվանդանն ուշ միջնադարում ենթարկվել է վերանորոգման, որի ընթացքում վարպետն իր ժամանակի տառաձևեր օգտագործելով հանդերձ՝ հավատարիմ է մնացել բնագրի բովանդակության պահպանմանը:

խաչադրոշը, որը, ենթադրելին է, նույնպես տարվել է զորքի առջևից: Երկաթյա ձողերի վրա խնամքով դասավորված բյուրեղի նրբաճաշակ հատվածների վնասման, առավել ևս ջարդվելու մտավախություն լինել չէր կարող: Ալ-Բիրունին ասում է, որ բյուրեղն «իր ամրությամբ փոխարինում է պողպատին, այնպես, երբ բյուրեղապակու մի կտորով հարվածում ես մյուսին, կայծեր են թռչում»[1]:

Այսպիսով, Մայր տաճարի թանգարանի երկու խաչերի շուրջ մեր անդրադարձը երևան է հանում այն իրողությունը, որ դրանց պատրաստման նյութերը՝ երկաթն ու բյուրեղը, պատահաբար չեն ընտրված ու խորհրդանշում են Աշոտ Երկաթի ու Աշոտ Ողորմածի մականունները:

Աշոտ Երկաթի երկաթյա խաչը



Աշոտ Ողորմածի բյուրեղյա խաչը

[1] **Ալ-Բիրունի**, էջ 172:

ԱՇՈՏՅԱՆ ԵՐԿՈՒ ԽԱՉԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշոտ Մանուչարյան

Բանալի բառեր՝ *խաչ, թագավոր, խորհրդաբանություն, թանգարան, ցուցադրել, երկաթ, բյուրեղյա, պատերազմ, զորք, հաղթանակ*

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանում ցուցադրվում են Աշոտ Բ. Երկաթ (914-925) և Աշոտ Գ. Ողորմած (953-977) Բագրատունի թագավորների խաչերը: Առաջինը երկաթից է և խորհրդանշում է թագավորի մականունը՝ Երկաթ, թեև արքան կարող էր խաչն ունենալ ոսկուց կամ արծաթից: Պատերազմների ժամանակ այդ խաչը նա մշտապես տարել է զորքի առջևից և հաղթանակներ տոնել:

Երկրորդ խաչը բյուրեղյա է (անբիծ մաքրության ընկալում) և խորհրդանշում է բարեգութ արքայի մականունը՝ Ողորմած:

СИМВОЛИЧНОСТЬ ДВУХ АШОТОВСКИХ КРЕСТОВ

Ашот Манучарян

Ключевые слова: *крест, король, символичность, музей, экспонировать, железный, кристаллный, война, войска, победа*

В музее Первопрестолья Св. Эчмиадзина экспонируются кресты Багратунийских царей Ашота II Железного (914-928) и Ашота III Милосердного. Первый из крестов, железный, символизирует прозвище короля Ашота II, несмотря на то, что он мог бы иметь крест из золота или серебра. Во время воин Ашот Железный постоянно носил этот крест впереди войск и праздновал победы. Второй крест кристаллный (кристалл имеет восприятие смысла незапятнанной чистоты) символизирует прозвище Благочестивого короля Ашота Милосердного.

THE SYMBOLS OF THE ASHOTIAN TWO CROSSES

Ashot Manucharyan

Key words: *cross, king, symbol, museum, exhebit, iron, crystal, war, army, victory.*

The two crosses of Bagratuni kings, one of Ashot B Yerkat /The Iron (914-925) and the second of Ashot G Voghormats/Merciful (953-977), are exhebited in the museum of the Mother See in Holy Etchmiatsin. The first one is of iron and symbolizes the name of Yerkat- Iron, though the King might have made if gold or silver. During the wars He would have carried the Cross right ahead the Army and , thus, could have victory over the enimy. The second cross is of crystal, expresses the purity and transparancy, and symbolizes the name of the King Voghormats thst means Merciful.